


# ՉԱՐԹԻՐ, ԼԱՕ, ԲԱՅՑ ՈՐՈ՞Ւ ԴԷՄ

Posted on May 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



**Մեր Պարզեւ Դաւիթեան**, Լուսաբաց (թիւ 1173), 14 Մայիս 2022

Հայաստանի ժողովուրդին մեծամասնութեան կողմէ երեք տարուան մէջ երկու անգամ մերժուած և որպէս "թալանջի" ճանչցուած խմբակցութիւնը, տասնեակ մը հազար հաշուող իր հետեւորդներով, կը շարունակէ փողոցային իր աղմկալի հաւաքներն ու երթերը իշխանափոխութիւն յառաջացնելու նպատակով:

Օգտուելով ներկայ իշխանութեան թոյլատու քաղաքականութենէն, որ կ'ուզէ լաւ երեւնալ յարելով Արեւմուտքի և Եւրոպայի ժողովրդավարական չափանիշերուն, ընդդիմադիր կոչուող խմբակցութիւնը առիթը չի փախցներ տարածելու "բազում աղմուկ վասն ոչինչի" իր արշաւը: Անօրինականութեան և անհնազանդութեան մոլուցքով լեցուած մարդիկ կարծէք բաւականացած չեն իրենց չարաբաստիկ "Հայրենիքի Փրկութեան Շարժում" ի ձախորդ արկածախնդրութենէն, երբ յառաջ քշեցին այժմ անհետ կորած Վազգէն Մանուկեանը՝ զայն չընտրեալ վարչապետ առաջարկելով, ու հիմա ալ ելած են ազգի շալակը "զարթի՛ր, լաօ" գոչելով:

Ի տես այդ մարդոց մոլեգին, աղմկալի ու ինքնահաւան պոռթկումներուն, մարդ կը տարուի հարց տալու, թէ որո՞ւն օգտին կը շարժին անոնք, եթէ ոչ միայն իրենց: Իշխանափոխութիւն պահանջողները իշխանատենչութենէ կը տառապին, որովհետեւ իրենց դաւանած հայրենասիրութեան, ազգասիրութեան և բարեփոխութեան մթերանոցին մէջ մը պակսի ժողովուրդին հաւատքը իրենց նկատմամբ: Փորձուածը անգամ մը ևս փորձելը յիմարութիւն է, և ժողովուրդը անոնց անցեալը վերյիշելով՝ «թքած ունի» անոնց կտակին (legacy) վրայ .... :

Դժուար օրերու մէջ կ'ապրին մեր ժողովուրդն ու պետութիւնը և ամենուն՝ Ռուսաստանի, Ամերիկայի և Եւրոպական խորհուրդին կողմէ բանեցուած խիստ ճնշումները, որ "նշացողը" վար իջեցնենք, որևէ ղեկավարի, Փաշինեան կամ ոչ-Փաշինեան, հակառակելու առիթ և կարելիութիւն չեն տար: Նախկինները երբեք փրկութեան ծրագիր կամ լուծում չեն ներկայացներ երկիրը դուրս բերելու այս անել վիճակէն և ներկայ վարչաձեւը քննադատելէ զատ բան չեն ըներ: Անոնք վարպետօրէն ձգձգեցին և յետաձգեցին քսան տարուան երկայնքին Արցախի հարցին լուծումը և խաբկանքներով օրօրեցին մեզ՝ առիթ տալով Ալիէի, որ իր բանակը զօրացնէ և պարտութեան մատնէ մեզ: Իմա ալ այդ նախկինները նոր խաբկանքներով կը ներկայանան մեզի "քաջ նազար"եան լոզունգներով նոր պարտութիւններու դռներ բանալու համաւ մեր առջև:

Եթէ "երկու չարաց փոքրագոյնը" կ'առաջարկուի մեզի ՄԵԾԵՐՈՒՄ կողմէ, պետք է համակերպիլ ուզենք կամ չուզենք՝ անիծելով ՄԵԾԵՐԸ: Ռուսիոյ դեմ ամբողջ Արեւմուտքին նեցուկը վայելող Ուքրանիոյ բախտը չունեցանք և չենք ալ կրնար ունենալ, երբ Թուրքիա կը շարունակէ ըլլալ շփացած գործընկերը ՆԱԹՕ-ի և Արեւմուտքի, երբ Փութինն ալ սիրաբանութեան մէջ է Երտողանի հետ: Եթէ Արցախի ազգային նկարագիրն ու անոր ժողովուրդի ապահովութիւնը Փաշինեանը յաջողցնէ ՄԵԾԵՐՈՒՄ

երաշխարհություն և անոնց տնտեսական օգնություն, զայն դաւաճան կոչողները դաւաճանած կ'ըլլան Հայաստանի և Արցախի մեր ժողովուրդին խաղաղ և անդորր կեանք ապրելու իրաւունքին դեմ:

Ասկէ դուրս ամէն ինչ ամբոխավարութեամբ զանգուածները աղետալիօրէն գրգռել է ի վնաս ազգին ու հայրենիքին:

Հայաստանի Ա. Հանրապետութեան շրջանին տկար ըլլալով՝ ակամայ կորսնցուցինք հող ու անկախութիւն, և նոյն վիճակին մէջ գտնուելով այսօր՝ ոմանց յոխորտագին ծայներուն անսալով կրնանք մեր այս ունեցածն ալ կորսնցնել:

Յուլիս 2021-ին, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքին ֆինանսական օժանդակութեամբ լոյս տեսաւ ուսումնասիրութիւն մը՝ "Սպիտակ Թուղթ" անուան տակ, որպէս վերնագիր ունենալով "2020 թ. Ղարաբաղեան պատերազմը և Հայաստանի ապագա արտաքին ու անվտանգութեան քաղաքականութիւնները" (139 էջ), հեղինակութեամբ իրենց ասպարեզներուն մէջ մեծ յաջողութիւն արձանագրած երեք հայորդիներու՝ Ռոբերտ Այդապիրեանի, Ժիրայր Լիպարիտեանի և Թալին Փափագեանի: Նախաբանի առաջին էջին վրայ անոնց ըրած հետեւեալ եզրակացութիւնը շատ բան պէտք է ըսէ ամբոխավարութեամբ մասսաները հրահրողներուն: " Դժուարութիւնն այն է, որ պէտք է պահպանել այն, ինչը կարելոր է Հայաստանի համար և ինչի վրայ կարելի է կառուցել, եւ թողնել այն, ինչը կարող է թուալ կարելոր այս կամ այն մակարդակում, բայց դա կամ անիրագործելի է, կամ մեծ դժուարութիւններ է ստեղծում առաւել կարելորի համար":

Հայաստանի և Սփիւռքի մէջ ուրիշին հայրենասիրութեան դաս տալ ուզող աղմկարարները լաւ կ'ընեն, եթէ ականջ տան վերոյիշեալ իմաստութեան, որպէսզի պահպանուի կարելորը Հայաստանի և Արցախի ժողովուրդներուն համար և "քաջնագարեան" հերոսութիւններով մեծ դժուարութիւններ չստեղծեն առաւել կարելորին համար: "Չարթիր, լաօ" պորչտուքներով և պաստառներով, թրքամետ կոչելով Փաշինեանն ու իր իշխանութիւնը, սխալ ճամբով քալելու պիտի չկրնան մղել լաօն: "Սուլթան" չկայ Երեւանի մէջ, որ "կ'ուզէ ջնջէ մըզի", և որո՞ւմ դեմ պիտի զարթնի լաօն, երբ իր պետութեան ներկայացուցիչները աշխարհը կը շրջին իր կեանքի բարելաւումն և հայրենիքի խաղաղութիւնը ապահովելու համար:

**There are no comments yet.**